


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան ֆր. 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՍ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարաք օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիս: Երկու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիս:
Զհրատարակուած գումարի մը եւ յսրուիր:

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

«Հայելի»ի ծրագրով ըսածնիս կը
կրկնենք թէ իրաւացի չէ բողոքական վար-
ժարանի մը ծրագիրը լուսաւորչականաց կող-
մէ քննադատելը, ընդհակառակն՝ պարտքեր-
նիս է զգուշացնել մերինները՝ որ զաւկներ-
նին չի յանձնեն այնպիսի վարժարաններ՝ եթէ
չեն ուզեր զանոնք վաղը բողոքականացեալ
տեսնել:

Մեր այս ըսածը կը հաստատուի հե-
տեւեալ երկու պաշտօնական յայտարարու-
թիւններով ալ՝ զոր այս շաբթու Պոլսէն ե-
կած «Բիւզանդիոն» լրագրէն կ'արտատպենք:

Ա.

«Երուսաղէմի գերմանական որբանոցին
կողմէ բացարձակ պատասխան տրուեր է Ե-
րուսաղէմի մեր Ս. Պատրիարքին թէ գեր-
մանիայէն իրենց ընդունած հրահանգն է որ
Հայ տղոց ո՛չ հայերէն սովորեցնեն, ո՛չ Հայ
եկեղեցւոյ դաւանանք ու ծէս, ո՛չ ալ Հայ
եկեղեցական ընդունին իրենց հաստատու-
թիւններուն մէջ: Հայ տղաք իրենց բարե-
պաշտական պարտաւորութիւնները պէտք է
կատարեն գերմանական—լուտերական մատու-
ռին մէջ »:


Բ.

«Տիւսէլտորֆի (գերմանիա) քննապէն
որբանոցին Տնօրէնութեան կողմէ պատաս-
խանուեր է մեր Պատրիարքարանի դիտողու-
թիւններուն՝ թէ իրենք չեն կրնար հայերէն
սովորեցնել Հայ տղոց, ո՛չ ալ Հայ եկեղեց-
ւոյ դաւանանքն ուսուցանել անոնց: Այս է
որբանոցին սկզբունքն: Ուղղը կը կենայ, չու-
ղղը կ'երթայ »:

Տես «Բիւզանդիոն», քիւ 181 Յունիս 5

Հայելի — Բողոքական վարժարանաց
կողմէ եղած այս յայտարարութիւնները մեր
ժողովուրդին ներկայացնելէ ետքը ալ իրա-
ւունք չունինք անոնց ծրագիրը քննադատելու
և «ինչո՞ւ Հայ եկեղեցւոյ դաւանանքը ու
Հայ լեզուն չեն սովորեցնել մեր զաւկներուն»
ըսելու: Չենք կրնար նաեւ մեր ժողովուրդին
վրայ ծանրանալ՝ վտանգը անոր մատնացոյց
ընելէ ետքը եթէ տակաւին նա ուզէ իր զա-
ւակը բողոքականի վարժարան ղրկելու, զի
օգուտ մը չարտադրելէ զատ՝ ամէն օր մեր
պաշտպանած սա սկզբունքին դէմ ալ մե-
ղանշած կըլլանք. «Ներկայ լուսաւորեալ
դարուս մէջ ամէն մարդ ազատ է ուղած
կրթութիւնը տալու իր զաւկին»:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՀԱՅԵԼԻ» Ի



4. Պոլիս 9 Յունիս

Բարեկամ,

Ձեր բախարակութիւնը կրկնապատկուած են իրենց յեղուզակութեամբը ծանօթ բազմաթիւ հրեաներ ոստիկանութեան գաղտնի պաշտօնայ գրուեցան, որոնք խեղճ քրիստոնեայները մանաւանդ յոյները ոչինչ պատճառներով կը մատնեն. ասոնց ձեռքէն աղատելու համար շատ մը յոյներ Պոլիսը ձգելով փախչելու վրայ են:

Ասկէ առաջ քանի մը անգամներ բանտարկուած ու անպարտ արձակուած Պոլսէն ծնունդէն թէնչիկէն Ստեփանին տղան՝ անցեալները կուզեն նորէն ձերբակալել, երիտասարդը կընդգդիմանայ, ըսելով որ «այս երթալ գալուն վերջը չի պիտի գայ». ասոր վրայ՝ զայն տարած ատենին ճամբան տոյն աստիճան կը ծեծեն՝ որ խեղճը բանտարկուելէ օր մը կտքը կը մեռնի:

* *

Խասգեղցիներու քաջածանօթ քէօր Իսմայէլ անուն յեղուզակը՝ իր երկու համախոհներուն հետ անցեալ Հինգշաբթի օրը 20ի չափ զինեալ քիւրտեր կը պահէ թուրքուծի մահալլէսին տան մը մէջ, ու պէս զի նոյն գիշերը անոնց գլուխն անցած՝ նոր շահատակութիւններ ընէ. բարեբաղդաբար գործը կիմացուի եւ տեղւոյն հաղարապետը՝ որ իր նախորդին պէս ջարդիւ կողոպուտի կուսակից չէ եղեր՝ անմիջապէս Թէրսիսանէի զինուորական վարչութեան իմացնելով՝ 2 գումարտակ զօրք բերել կուտայ ու քիւրտերուն պահուստը տունը պաշարելով՝ քէօր Իսմայէլն ու երկու ընկերները Երլտըզի պալատը իսկ քիւրտերը զոյգ զոյգ շղթայակապ կեղդոնական բանտը կը ղրկէ:

Շաբաթ գիշեր ալ Գըրգ ներտիվները բնակող թրքուհի մըն ալ էրկնէն ծեծ կերած ատեն պատուհանը բանալով «ճան գուր-

թարան եօգ մը» կը պուայ. այս ձայնէն՝ խուժանը կարծելով թէ Հայերը կամ Յոյները ոտք ելած են՝ սօբաներով ու ճօքերով զինուած գուրս կը նետուին, բայց ոստիկանք զանոնք կը ցրուեն:

Ալ կրնաք երեւակայել թէ այս վիճակին մէջ միթէ մարդ կրնայ աներկիւղ անցունել իր ժամանակը:

ԲԻԿՄԱԼԵՕՆ

Վառնա 13 Յունիս

... Խմբագիր Տէր.

Յանուն անկողնեակալութեան հաճեցէք հետեւեալը հիւրընկալել Ձեր Աղգօգուտ թերթին մէջ:

Այս շաբթու թուցիկ թերթ մը հրապարակ ելաւ, որուն պարունակութիւնը ամենուս յայտնի է, եւ որուն վրայ տեղական Հայ թերթեր իրենց խորհրդածութիւնները ըրին. այս խորհրդածութեանց մենք ալ համամիտ գտնուելին յայտնիէ ետքը՝ նոյն թուցիկ թերթին մէջ պարբերութեանը համամիտ չըլլալին ալ կը յայտնենք, գիտնալով որ հրապարակ ելած գրութիւնները իրենց ամբողջութեամբ ընդունելու պարտական չըլլալով՝ մ'ընք ալ ազատ ենք այդ մասին մեր գիտողութիւնները ընելու:

Ասկէք քանի մը ամիս առաջ Հայ. Յեղ. կուռակցութեանց 2000 ոսկի նպաստած ըլլալու ախոստանութեամբ 3 տարուան տաժանակիր աշխատութեան գատապարտուող Տիար Աբիկ Ունճեանի համար նոյն թուցիկ թերթին մէջ «դաւաճան» անունը տրուել էր, անշուշտ վիրաւորեալ թուրք զօրաց նպաստ մը տուած ըլլալուն համար, առանց նկատողութեան առնելու այդ մարդուն դիրքը, առանց մտածելու նաեւ որ եթէ իրենք այս միջոցիս Պոլիս գտնուէին եւ տեղւոյն կառավարութիւնը բռնութեամբ իրենցմէ ալ նպաստ առնելու, դաւաճան եղած պիտի ըլլային: Իսկ եթէ ուրիշ պատճառ մը կայ զայն դաւաճան հռչա-

կելու՝ պէտք է ըստ օրինի իրաւացի փաստե-
րով՝ ճակատաբաց՝ ժողովուրդին բացատրել
հրապարակաւ (ոչ թէ անստորագիր հրատա-
րակութիւններով կամ բերանացի սուտերով)
ապա թէ ոչ՝ մեզ նման շտաեր՝ զՏիար Աբիկ
Ունձեան կը ճանչնան Հայ Եկեղեցին ու Հայ
ազգը սիրող մարդ, ու չեն կրնար մէկ երկու
անձանց տէքին գէշ երեցած ըլլալուն համար
դաւաճան կոչել զինքը:

Մնամք յարգանք

6 Ստորագրութիւնք:

Վ Է Ճ Մ Ը

Անցած շաբթու էր,
Մասիսի խառնվէն
Խումբ մը պարոններ
Էին հաւաքուէր:

Հանդարտ ու խաղաղ
Նստած խօսէին,
Իրարու լեզուէ
Լաւ հասկընային:

Չ'գիտէնք որի՞ն
Եկան նազարին՝
Որ վէճ մը բացին
Վերջը չի բերին:

Մէկը մէջերնուն
Կըսէր, — Թէ Սասուն
Հասնէր օգնութիւն՝
Յաղթէր քիւրտերուն —:

Ուրիշ մը ըսաւ.
— Զէյթունին հասաւ,
Ի՞նչ ընել կրցաւ,
Նորէն ետ տուաւ —:

Մին պատասխանեց.
— Օր մը կերա՞ւ ծեծ.
Թշնամւոյն յաղթեց՝
Ցիրուցան ցրուեց —:

— Մեր քաջ Զէյթունցին
Նօթի ձգեցին,

Մինչ անոր անուամբ
Միլիոն ժողուեցին —:

Յանկարծ անդիէն
Պարոն մը գաճաճ
Սուր ձայնով պոռաց՝
Խառնվէն սարսըռաց:

— Ատոնք ձգեցէ՛ք,
Ամենքս ալ գիտենք,
Պոլիս որ գացիք,
Ընէք, ի՞նչ ըրիք —:

— Ալ ի՞նչ ընէինք,
Պօմպա շինեցինք,
Պանքան կոխեցինք՝
Տահնուվրայ ըրինք —:

— Միթէ ըրի՞ք լաւ,
Հայն ալ իբրեւ հաւ
Մեծ ջարդ մը կերաւ
Ու Վառնա փախաւ —:

— Իսկ գաւառները
Զարդուած հայոց
Տասն եւ վեց հազար
Որք կան ի փողոց —:


— Պատճառը ո՞վ էր,
Դարձեալ մեր հայն էր,
Միութեամբ չգործողք
Են միշտ կորուսողք —:

Սոյն վէճը մեծցաւ,
Կըռւի փոխուեցաւ,
Խառնվէճ/ին վաղեց՝
Ատոնք դուրս նետեց:

Ասանկ խնդիրներ
Երբ խռնվէն ծեծուին՝
Նախատինք բերեն
Մեր անտէր Ազգին:

Արշաւաճագ





Մայրիկ, հացագործը եկաւ .

— Կայնէքա սաոր աշկին մէյ մը է-
րեամ, զէրէ 2—3 օր է բերած հացը բիւ-
թիւն խմոր է : Հաճի աղբար, հաց մը տուր
նայիմ :

— Ա՛ռ ա՛պրիկ :

— Առգա պրիկը ո՞վ է .

— Առկա պրիկ չէ, ապրիկ ըսի, սանքի
ապրա ըսել կուզիմ :

— Էյ ես ապրա՞ եմ :

— Տիւտիւ հանում, ֆօքիւ սիրածս,
ապրային մէյնութիւնը քոյր ըսել է . մեր էր-
կիրն ալ ֆէօս ալ ասանկ կըսին :

— Մեր կիտցածն ալ ապրա տէյի խըզ-
մէթճի կնկանը կըսեն :

— Ադ խուսուսը չգիտէանք, հօշ զա-
րարու բան մի չէ, խաթիւն մի տանը հէմ՝
հանումն է հէմ ապրան :

— Անանկ է ամա՛ առ տուած հացդ ալ
խմոր է :

— Քուլլին մէկ է :

— Աս թարաֆը մո՛ւկն է կեւ եր, ինչ
է եղեր :

— Քօրական (բիւրէկ) կօթն է մաներ :

— Քա ճանրմ, աս ամէն օր մեղի խը-
մոր հաց պիտի կերցնես :

— Քուլլին մէկ է ըսինք ա՛ :

— Մեղայ տէր Աստուած, ադ քիւլլը
մոխիրըդ պաշխասիին կլեցուր . օխտը ամիս
է պիւ տիւզիյէ բարանիս կառնես կոր :

— Բամանքդ ալ օխտը ամիս է պիւ
տիւզիյէ հաց կուտիս կոր :

— Չէ, արթըս սա մէկ բանի օրուան
բերած հացդ բիւթիւն խմոր էր :

— Շիտտակ է . չորս օր էռաջ չէթէ-

լէն լեցեր էր նը՝ հէչ խօրաթա մի չունէ-
աք . էրկու օր է ուր 25 շըշ . թէսլիմաթով
չէթէլէն թէնզիլ արիք ա՛, հրմայէկըս տէր
բարթամին ողաթաիին պէս լեղիւդ էրկնցեր
է . ադ խուսուսը չէթէլէին պօշն էրկնայ
նէ ըսէ, զէրէ՝ ան ասեն խմորն ու կուտիս
քէքէկն ալ :



Տեղային Բառարան

(Նար)

Օնուշտան՝ Անոր համար : Տէրիգանլը՝
Մինչև 90 տարեկան ամուրիին : Տա՛մ՝ Ա-
խուս : Ատամ՝ Էրիկ : Չուշկա՝ Պղպեղ :
Պօղլուգ՝ Աղբ : Ինսան կէլտի՝ Հիւր եկաւ :
Պըլտըր՝ Անցած տարի : Մաճառ՝ Դրան կըզ-
պանք : Հալաթլամագ՝ աճապարել : Սը-
պըթմագ՝ Նետել : Գշթրտամագ՝ Տեղէն ե-
րերալ : Ուղտըր՝ Լաւ է : Ակա՝ Մեծ եղ-
բայր : Գօմա՝ Փախիր : Հաչան՝ Երբոր :
Հչտրմա՝ Մի՛ ձայներ : Բինմէք՝ Սանդուղէն
վեր ելնել : Բագլամագ՝ Մաքրել : Գնագ-
լատը՝ Գնաց : Էկաւլատը՝ Եկաւ : Մեռաւ-
լատը՝ Մեռաւ : Աղնաշալըմ՝ Տեսնուի՛նք :

Երկու բարեկամն հիւր

Վերոնիքա հանրմ բան մը իմացանք՝ էյ
բէք ինդացինք . բրոշը փղջիկը Զապէլիցան
նշաներ էք եղեր, իրա՛ւ է .

— Պէլի, տառօսը չիթթէնեւուդ . փե-
սացունիս էբէյի տարիքոտ էր ամա՛ աշվընիս
կոցեցինք լմնցուցինք :

— Բէք աղէկ էք ըրիր, պազի պաղի ա-
նանկ պիչիմսիդ բաներու աչք գոցելու է :

Խօսակցութիւն նորապսակ ամուրիին

Սիրելի ամուսինս, այնչափ կը սիրեմ
բեզի, որ կը վախնամ թէ մի՛ գուցէ ամուս-
նական կեանքէ ձանձրանաս . . .

— Ա՛հ, պաշտելի կինս, ատանկ վախեր մի՛ ունենար, ամուսնութիւնը այնքան կը սիրեմ որ, Աստուած մի՛ արասցէ եթէ այսօր մեռնիս՝ վաղը նորէն կ'ամուսնանամ:

Պարոն, իմ աղջիկներէս մէկուն ձեռքը կը խնդրէք, լաւ ուրեմն գիտցէք որ պըզտիկ աղջկանս 200 ոսկի դրամօժիտ պիտի տամ, կրտսերին 300, և մեծին՝ 400 ոսկի:

Թեկնածուն՝ երկչոտ քաղաքավարութեամբ մը,

— Ներեցէք, արդեօք աւելի տարիքոտ աղջիկ մըն ալ չունի՞ք...

Տօբթօր, կը կարծէ՞ք որ ծխելը վնասակար ըլլայ:

— Անշուշտ... վառարաններէն դատեցէք, անոնք որ չեն ծխար՝ լաւագոյններն են:

O.

Տիպար սպասաւոր մը

Պարտկանի մը դուռը կը դարձնուի:

Սպասաւորը — Ո՛վ կ'ուզէք:

— Մերկէրիոս աղան:

— Ի՞նչ պիտի ըսէք:

— Հետը պղտիկ հաշիւ մը սւնէիներ տէ...

— Հոս չէ, երէկ այնինչ գիւղը դնաց:

— ... պիտի վճարէի:

— Բայց այս առաւօտ եկաւ:

Ընտանեկան պարահանգէսի մը մէջ:

— Ի՞նչ ձանձրալի երեկոյթ մը եղաւ, կըսէ հրաւիրեալներէն մէկը:

— Ո՛հ, ճշմարիտ է, վերջին աստիճան ձանձրալի:

— Եկէք ձեզի հետ մեկնինք:

— Սիրով կ'ընկերանայի, բայց անկարելի է:

— Իւր ինչո՞ւ:

— Որովհետեւ... տանտէրը ես եմ:

Աստուր աղային ճաշարանին մէջ:

Մզմզապատիւ յաճախորդ միւսիւ մը բար կութեամբ ձայնեց:


— Վա՛րպետ:

— Ի՞նչ կը հրամայէք միւսիւ:

— Սա բերած պանիրդ ամենեւին համ հոտ չունի. աս ասանկ ի՞նչ եմ կըսէ:

— Տասը բարայի պանիրը ի՞նչ կուզէք որ ըսէ, դիմացիդ կեցած տաննախօսութիւն պիտի ընէ...

ԶԲՕՍԱՆՔ



Ո՛ւր է որորդը:

..

Առաջին երեք լուծողներուն անունները պիտի հրատարակենք կարգաւ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀՐԵԱՆԵՐԸ

Մշակույթն էր տեղեկանանք թէ՛ Պարսկաստանի հրեաները առաջուց ի վեր կուրծքերնուն վրայ կունենան եղեր մէյմէկ կարմիր «կարկտան», — անշուշտ հրեա ըլլալին յայտնուելու համար — և այս կարկտանին համար տարեկան մէկ Թումանն աուրք կը վճարեն եղեր նոյն կառավարութեան:

Արդ, վերջերս դեսպանաց միջնորդութեամբ այդ կարկտանը վերցուած ըլլալուն՝ Պարսիկ ժողովուրդը բարկացած կը պահանջէ որ Պարսկաստանի հրեաները որ 80,000 հոգի են՝ կարմիր կարկտանը բակցունեն կուրծքերնուն վրայ որպէս զի տարեկան 80,000 թումանն չի փաստէ տէրութեան գանձը. ու թէ և կառավարութիւնը խոստացեր է այդ կարկտանին տեղ պղինձէ միտալ մը կախել տալ հրէից՝ զոր ինք պիտի աւայ և աուրքը գանձէ, բայց ժողովուրդը կարմիր կարկտանը հրէից համար ստորնութեան նշան ալ համարելով՝ չուզեր եղեր զայն միտալի վերածել:

Հիմա հրեաները երկու սուրի մէջ մը նացեր են. եթէ կարկտանը բակցունեն՝ իրենց ազգապետին կողմէ կը պատժուին, եթէ չի բակցունեն՝ Պարսիկներէն կը նեղուին: Այս մասին Պարսիկի մը ու հրեայի մը մէջ անցած խօսակցութիւնը մեր ընթերցողաց կը ներկայացնենք:

— Բէս քի եահուտի, հանի սէնին կէօյսիւնին կըրմըպի եամա:

— Ա՛ տովլէթլիմ, պիզ սիզին տեաք թուռապիսի եիզ. խախամխանէ թարաֆիսին տան օ եամայը գալտիռմագ իսթէմիշլէր՝ տովլէթիմիզ տէ ըազի օլմուշ:

— Մէն միլմէնէմ ա՛յ քէօրէ ուշադի եամասիզ եահուտի օլմա՛ղ:

— Վէսէլամին ամին:

— Իմտի...

— Խազինիյ վառ ամա՛ չիմտիքի վագիթին տա պույուգ այուպ շէյ եամալի եէզմէք:

— Ա՛յ քէօրէ ուշադի, տամկասըզ եահուտի օլմա՛ղ... տէ՛մէմիշէմ սանա՛:

— Սօղում եապանա՛ տամկասիզ էշէկ օլմազ եիպի պիր լաֆ:

— Միլմէնէմ. եարին սէն եամալի օլմալիսէ՛ն,

Ա՛ շախիմ, սէսիմտէն աղնամա՛ղ միսին քի պէն եահուտի եիմ:


— Եօ՛խ, եօ՛խ. սէս չիգարմագսան՝ մէն հէրտէ պիլէճէիմ սէնին եահուտի օլտուղուն:

— Պուտա աօղրու էֆէնտում, սօգաա չիգառ չիգմաշ՝ նէֆէսիմիզ պիթինճէյ գատառ սէս մի չիգառմալի:

— Եահուտի՛, կըրմըլի եամալի օլմազ սան՝ էօզիւմ սէնի տէօվէրէմ:

— Իշթէ պու. իքի պուչագլառ առասինտա գալտիգ: Տօւնեատա պույուգ սօյլէմէմէլի իմիշ. պիզիմ եահուտի միլլէթինաէն իռախաթ միլլէթ եօգ տէռ եուլէռ իտիք. եուլմէմիզ գառնիմիզտա գալիեօռ:

ՆԿԱՐՀԱՆՈՒԿ ԹԻԻ 2



Եւրոպական հանգէսներու ըրածին պէտայսօրէն սկսելով մենք ալ նկարները անկարգ պիտի դնենք: Ա. անսխալ կարգացողին նուէրնէ՛ մէկ ամուսն «Հայկազ»:

Թիւ 1 Նկար հանուէր կարգալ այսպէս «Մարդ մարդու քահանայ մարդ մարդու սա»

տանայ Դ: Ի վառնա Ա. լուծողը եղաւ՝ Տի-
ար Արամ Թ. Խաթանապոլեան, իոկ ի Ռուս-
ճուգ՝ Տիար Տիրան Ենովք:

ԹԱՊԼԱՔԵԱՐ ԴԱՆԻԿ ԱՂԲՕՐ ՃԻԻՄՊԻԻՇԸ

Երէկ իրիկուն հետաւեալ նամակը ըս-
տացանք մեր Դանիկ աղբորմէն:

Վերապայտական մուշու Հայելիին սեր
ի սրտէ:

Ծառայական հէր իշտար ուր զաղէ-
թա կարգալու տտէթ մի իթիթիսալ չիմ ա-
րեր իսէ թը՝ մեր հէմշէրիներէն Տիւտիւկէնց
Աստիւր աղայէն իմացանք ուր՝ Եէլ—տէկիր-
մէնին մայմուս հանումի տունի ճիւղալիւշիս
րամմանքնիդ իւրիւսնամէններնութ վասըթայով
թէլլալի էք տուէր:

Վախիտէ վերապայտականութեանդ ադ
խայտէին դէմ իթիրալ չենք կրնար ընել ի-
սէ թը՝ պարէ քէրէմ ու հիմէթ անէիք
տէ՝ ան օրը հաց ուտելնէս սըղրա բաշա—
բիշտի խաղալնիս օլտուն զայտ չանէիք, զէրէ
ան վախիթ կէրէք հէմշէրիներուն վէ կէրէք
իւրիւսնամէնիդ կարգացողներուն ձեռքէն պօ-
չերնիս չաղատիր:

Մէմնունիյէթնիս ու ուպուտիյէթնիս պիլպէյան
Մնամ ծառայից ծառայ
Անծոտենց Դանիկ

Տեղւոյ անձկութեան պատճառաւ Դա-
նիկ աղբօր ճիւղալիւշին շարունակութիւնը յա-
ջորդ թերթով:

ՀԱՆԵԼՈՒԿ
Թիւ 10

Քոյր և եղբայր զիրար առին,
Հայր մայր տեսան չարգիլեցին:

Թիւ 9 Հանելուկն էր Լու (Բիրէ) և Չու-
չուկ (Կէնէ). առաջինը ունի մէկ աչք և
յատակ, իսկ երկրորդը միայն երկու աչք:
Ա. լուծողն եղաւ Տիար Արամ Հանմեան:



Մարդ մը իւր ապուշ մէկ բարեկամին
հարցուց:

— Աւտ'դ, բարեկամս, չէի գիտեր, որ
չափ տտէն է որ այրի էք:

— Կնոջս մեռնելէն ի վեր:

Կատակախօս մը մեռած տտենը հետեւալ
կտակը ըրաւ:

«Սիրելի կինս, առնելիք չունիմ, պարտք
չատ ունիմ, մնացածն ալ զաւակացս կը թո-
ղում:

Կենդանաբանութեան դասատուն — Պա-
րոն Վահրամ, վնասակար թռչունները ճանչ-
ցանք, հիմա կարգը եկաւ օգտակարները ճանչ-
նալ, ըսէ նայինք, օգտակար հանդիսացողնե-
րը որո՞նք են:

— Քէպապ ըլլալով սեղանը բերուածնե-
րուն ամենքն ալ օգտակար են:

ՕԳՏԱԿԱՐ ԽԲԱՏՆԵՐ

Խմելիք ջուրին համար պարզուտ (սիւզկէճ)
չինել:

Խմուելիք ջուրին ընտրութիւնը՝ մարդ-
կային կազմութեան վրայ ունեցած մեծ ներ-

գործութեան պատճառով՝ առողջապահական կարևորագոյն զգուշութիւններէն մին է: Զուրը կապականն մանրագիտային կենդանիք՝ երբ ջուրին հետ կուլ կուտանք, որոնք ներքին խառնակութիւն և մինչև իսկ մահ կը պատճառեն: Ուստի ամեն մարդ կրնայ իր ձեռքով իսկ պատրաստել ջուրի պարզուտ մը՝ և վերոյիշեալ վտանգներէն ազատիլ:

Թաղար մը առնելով՝ յատակը՝ նախ փոշի եղած ածուխի 2—3 սանդիւմէթր թանձրութեամբ խառնով մը ծածկելու է. ետքը՝ ածուխի այդ խառին վրայ նոյն թանձրութեամբ և հետզհետէ աւազի, խճաքարի եւ մանր քարերու երեք խաւ եւս աւելցունելու է: Ապա մակերեսը պէտք է ծածկել ասուեղէնի կամ ֆանէլայի կտորով մը, որպէս զի ջուրը պարզուտին մէջ կաթիլ կաթիլ վազէ եւ ոչ թէ մէկանց: Եւ որպէս զի ջուրը դիւրաւ գուրս ելնէ՝ թաղարին տակը գանուած ծակին վրայ հողէ ամանի կտոր մը պէտք է դնել, այս կերպով ածուխի փոշին չի կրնար ծակը գոցել կամ գուրս թափիլ:

ԱԶԳ

ՏՕՔԹ, Ե. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերադարձած է Սօփիաէ և կընդունի հիւանդներ ամեն օր իր տունը ի Պալլոգ Բազար, առաւօտները ժամը 10էն 12, իսկ կէս օրէն վերջը 2էն 5: Զորեքշաբթի օրերը կէս օրէն վերջը ժամը 2էն 5 ձրհապէս կը դարմանէ: 1—10

ԿԱԼՎԱՆԻՍԹ

ՕՆՆԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Ամեն տեսակ տպագրական կազապարներ պատրաստող, նաև թէ անձնական և

թէ՝ առևտրական կնիքներ: Դիմել ի վարնա Զիլինկիրէր փողոց թիւ 561:

Գին գոհացուցիչ:

8—12

ԳԱՐԵԳԻՆ ՏԱՆԱՊԱՇԵԱՆ Եւ ԸՆԿ՝ 'ԻԵՐԱՍԿ

Մեծ փողոց Բրէսլաւսքա, թիւ 3 վառնա

Վայելուչ ձև և ընտիր կերպասեղէնք: Ներկայ ամրան եղանակին յատուկ բաւական ապրանք բերել տրուած է: Զափաւոր գին: Առիթէն օգտուեցէք:



ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ



(ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆԶՈՒՓ
վառնա 5րդ թաղ Ելտըլ Թապիա

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաև շոգեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթեայ գործիքներ, զրամանկան գոսաններ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ և այլն և այլն կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինութիւններէն:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Ռուսճուգ	Տիարք Եղբարք Սարաֆեան:
Սիլիսդրէ	Տիար Արթուրի Սարգսեան:
Հսւմլա	Յովհաննէս Մաճարեան:
Սօփիա	Յակոբ Ծերունեան:
Լոնտոն	Հայկ Աստուածատուր

Отговоренъ-редакторъ: Н. Драгулевъ

Печатница „Взаймность“ — Варна